



Տիգրան Հոնենցի եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից.

(վերարտադրություն Մ. և Ն. Թինրբի ամուսինների գունավոր ֆոտոլից):

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա Ն Ի

Ք Ա Ղ Ա Ք Ը

Միջնադարյան Հայաստանի
քաղաքաշինության
պատմությունից



Հայաստանի պետական հրատարակչություն
Երևան 1964

72 (С43)

Հ 42

ԵՊՀ Չրադարան



SU0135895

ВАРАЗДАТ МАРТИРОСОВИЧ АРУТЮНЯН

ГОРОД АНИ

(на армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1964

*Մեծ գիտնական, վաստակավոր
հայազնու և Անի քաղաքի բազմա-
մահմուտ հետազոտող
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ
պայծառ հիշատակին է նվիրում
հեղինակը:*

Ուղիղ հազար տարի առաջ, 963 թվականին, Անիում հիմնադրվեցին Աշոտյան պարիսպները: Նրանց կառուցումով, ամրոցը, որ այդ ժամանակ արդեն հայ Ռագրատունիների նստավայրն էր իր ոչ մեծ բնակատեղով բլուրի հյուսիսային լանջին, դարձավ պաշտպանված քաղաք, իսկ հետագայում՝ ծաղկուն մայրաքաղաք, ֆեոդալական Հայաստանի վարչա-ֆաղափական, Խոնարարահեստավորական և կուլտուրական հանրահայտ կենտրոն:

Միաժամանակ, հայ ժողովրդի պատմության մեջ Անին ունեցավ անզնահատելի նշանակություն նաև որպես միջնադարյան քաղաքաշինական կուլտուրայի յուրահատուկ մի օրինակ, որպես քաղաքային աշխարհիկ և եկեղեցական նարտարապետության կազմավորման ու զարգացման մի կարևորագույն օրրան:

Գիտական աշխարհի ճանաչմանը վաղուց խրժանացած միջնադարյան հայ նարտարապետության այդ հազվագյուտ թանգարանը, ներկայումս դաբս է Սովետական Հայաստանի սահմաններից, շարունակում է մնալ հայ ժողովրդի կուլտուրական ժառանգության բաղկացուցիչ մասը:

Անիի հազարամյակին նվիրված այս համառոտ ուսումնասիրությունը, կազմված հնագիտական պեղումների, պատմագրական և այլ աղբյուրների նյութերի հիման վրա, նպատակ ունի հնարավորին չափ լուսաբանել հայ ժողովրդի պատմական անցյալում այնքան կարևոր նշանակություն ունեցող այդ օջախի քաղաքաշինական պատկերը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ա. ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԱՅՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Անին որպես քաղաք պատմական ասպարեզ մտավ միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքներից ավելի ուշ, ու թեև նրանցից շատերի համեմատությամբ գոյություն ունեցավ ոչ երկար ժամանակ, սակայն հայ ժողովրդի պատմության մեջ կատարեց նշանակալի դեր, որպես երկրի վարձագման ֆեոդալիզմի ժամանակաշրջանի քաղաքական, առևտրա-արհեստային ու կուլտուրական կարևոր կենտրոն:

Որպես անառիկ ամրոց, Անին հիշատակում են Եղիշե և Ղապար Փարպեցի պատմիչները հայերի 450—451 թթ. ապստամբության և 481 թ. տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ: Այն պատկանում էր Արշարունիքի տեր Կամսարական իշխաններին: Հետպիետե ուժեղացող Բագրատունիները VIII դարի վերջում, Աշոտ Մսակեր իշխանի ժամանակ, պարտության մատնելով Արշարունիք նահանգը գրաված արաբական Ջահան ոստիկանի զորքին՝ գրավեցին նահանգը Անի ամրոցի հետ միասին ու վճարելով որոշ գումար Կամսարական իշխաններին, դարձրին այն իրենց սեփականությունը:

Հնագիտական պեղումները ցույց են տվել, որ բերդին կից եղել է բնակավայր: Մաքենացոց վանքի 901 թ. վերաբերող՝ մի արձանագրությունից կարելի է կռահել, որ Անիում գոյություն ունեին առևտրական շենքեր, որն իր հերթին հիմք է տալիս եպրակացնելու, որ արդեն X դարի սկզբին նա կազմավորվել էր որպես քաղաքատիպ բնակավայր:

Բագրատունիները միանգամից չէ, որ Անին դարձրին իրենց նստավայրը: Սկզբում նրանք հիմնվեցին Բագարանում, հետո փոխադրվեցին Երազգավորս (Շիրակավան) և վերջում միայն որոշեցին Անին դարձնել իրենց թագավորու-

1 Կ, Կոստանեանց, «Վիմական տարեգիր», Ս. Պետերբուրգ, 1912, էջ 5:

թյան մայրաքաղաք: Իհարկե, ոչ Բագարանը, ոչ էլ Երազավորսը չէին կարող համեմատվել Անիի հետ բնական այն պայմաններով, որոնք թույլ էին տալիս անառիկ և հուսալի ապաստան ստեղծել: Ահա թե ինչու ընտրելով Անին որպես նստավայր, այդտեղ էլ 961 թ. Աշոտ Ողորմածը թագ ընդունեց, որը և կանխորոշեց Անին նորաստեղծ թագավորության մայրաքաղաք դարձնելու հարցը:

Անիի նոր և գործունյա տերերը անմիջապես սկսեցին աշխատանքներ ծավալել՝ մայրաքաղաքը պաշտպանական կառուցվածքներով ապահովելու ուղղությամբ: 963—964 թթ. կառուցվեցին Աշոտյան, իսկ 989 թ. Սմբատյան պարիսպները: Աշոտյան պարիսպների կառուցման առիթով Վարդան Բարձրաբերդցին պատմում է թե՛ «Սա (Աշոտ Ողորմածը—Վ. Հ.) պիտքը պարիսպ քաղաքին Անույ շինեաց և Կալենայն բրգունս եկեղեցիս յօրինեաց ՚ի չորս հարիս Երեքուսան թուին»¹:

Սմբատյան պարիսպների կառուցման մասին պատմում է այդ աշխատանքների ակնատես՝ Ստեփանոս Տարոնացին (Ասողկը): Ըստ նրա տեղեկության՝ «Սա (Սմբատը, որդին Աշոտի — Վ. Հ.) լի արկեալ՝ պարսպափակ առնէ պարիսպն Անույ, յԱխուրեան գետոյ մինչև ցճորն Ծաղկոցաց, կրով և վիմով մածուցեալ, մահարձանօք և աշտարակօք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան Կին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բլենապինդ ամրացուցեալ: Արկանէ հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անույ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ վկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայ»²:

Եթե Աշոտյան պարիսպները, որոնք կառուցված էին պարանոցի նեղ մասում, պաշտպանված բնակելի տարածություն ստեղծեցին միջնաբերդի հյուսիսային փեջերին, ապա Սմբատյան պարիսպների կառուցմամբ զգալիորեն ընդարձակվեց քաղաքի պաշտպանված մասը: Այդ միջոցառման շնորհիվ է, որ վերջնականապես կապմավորվեցին նոր քաղաքի հատակագծային կառուցվածքի երկու էական մասերը՝ միջնաբերդը, որը դարձավ Բագրատունիների նստավայրը և շահաստանը կամ բուն քաղաքը:

Համարյա մի ամբողջ դարի ընթացքում (X դարի երկրորդ և XI դարի առաջին կեսեր), երբ Անիի թագավորությունն ապրում էր իր գոյության համեմատաբար խաղաղ շրջանը, ծայր առավ բուռն քաղաքաշինություն, որը հիմնականում կենտրոնացած էր պաշտպանական ամրություններով պարփակված մասում: Բագրատունիները ոչ միայն ընդարձակեցին և ամրացրին Անին, բլրի

¹ Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 122:

² Ստեփանոսի Տարոնացոյ Ասողկան, Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 137:

վրա կառուցելով քաղաքի նկատմամբ իշխող դիրք ունեցող իրենց պալատը, այլև քաղաքի կենտրոնը կառուցապատեցին եկեղեցական ու աշխարհիկ շենքերով, բարեկարգեցին այն ու ապահովեցին այլևայլ կառուցվածքներով:

Թեև մատենագիրը Բագրատունյաց թագավորների պալատական ճարտարապետ հռչակավոր Տրդատին վերագրում է միայն Արգինայի, Անիի մայր տաճարի և ս. Գրիգոր (Գազկաշեն) եկեղեցիների շինարարությունը, սակայն վրտահորեն կարելի է ասել, որ այդ փորձառու և երկրից դուրս էլ մեծ համբավ վայելող ճարտարապետը գործոն մասնակցություն է ունեցել նաև Բագրատունիների կողմից նշված շրջանում Անիում ձեռնարկած քաղաքաշինական աշխատանքներում:

Պատմական աղբյուրները, նույն թվում և վիմագրական, որոնք այնքան առատ տեղեկություններ են պարունակում եկեղեցիների կառուցման վերաբերյալ, չափապանց թույլ են լուսաբանում Անիի քաղաքացիական շինարարությունը: Այդ պակասը, բարեբախտաբար, լրացնում են իրենք՝ նյութական կոլտուրայի հուշարձանները, որոնք հայտաբերվելով պեղումների ընթացքում, զգալիորեն ընդարձակում են ու ճշտում մատենագրական ու վիմագրական տվյալները: Դրանք, այդ հուշարձանները պարզեցին, որ Անին դեռևս Բագրատունիների ժամանակ գերաճել էր քաղաքային պատերի սահմաններից, տարածվել դեպի հյուսիս ու շրջակա կիրճերը, որպիսին, վկայում են ոչ միայն Հովվի եկեղեցին ու Կանապան հուշարձանների մնացորդները, այլև որոշ պատահական գյուտերը: Խոսելով Անիի հնագիտական ուսումնասիրության համար այդ գյուտերի ունեցած նշանակության մասին, Ն. Մառը դեռևս անցած դարի վերջում ասել է. «Եթե «արձանագրությունները», ինչպես առիթ ենք ունեցել նշելու մի ուրիշ տեղում, երբեմն լրացնում են մատենագրերի հայտնած հակիրճ ու չոր տեղեկությունները, հետաքրքիր ու բազմանշանակ դարձնելով դրանք, ինչ առաջ անտեսվում էր որպես ոչ կարևոր տեղեկություն, ապա նյութական գյուտերը, անեցիների բնակարանների և կահույքի հետ ծանոթությունը լույս է սփռում, ի միջի այլոց, հին հայկական կյանքի այն կողմի վրա, որի մասին հայկական մատենագիրները պահպանում են գերեզմանային լռություն»¹:

Շինարարական գործունեությամբ զուգակցվող խաղաղ կյանքն Անիում շարունակվեց մինչև XI դարի կեսը: Երբ վախճանվեց Բագրատունյաց թագավորական տոհմի նախավերջին ներկայացուցիչ թուլակամ Հովհաննես—Սմբատը, (որը համաձայնել էր ստորագրել մի կտակ, որով իր մահից հետո թագավորությունը պիտի անցներ Բյուզանդական կայսրությանը) 1041 թ. բյուզանդական մեծաքանակ զորքերը շարժվում են դեպի Հայաստան, նպատակ ունենալով

¹ Братская помощь армянам, сборник, стр. 198—199.

գրավել նրա մայրաքաղաք Անին: Քաղաքի բնակիչները՝ լեզենդար կորավար Վահրամ Պահլավունու գլխավորությամբ մղված հերոսամարտում չախջախում են թշնամու կորքը և ստիպում նրա քայքայված մնացորդներին հեռանալ Հայաստանի սահմաններից: Իվուր անցան բյուզանդացիների նաև հետագա երկու արշավանքները Անիի վրա Գագիկ Բ-ի թագավորության օրոք (1042—1045 թթ.): Պատմական այդ նշանավոր մարտերի ժամանակ Անիի պարիսպներն ու ամրությունները փայլուն քննություն բռնեցին՝ ապահովելով քաղաքի փոքրաքանակ պաշտպանների հաղթանակը թվով գերապանցող բյուզանդական կորքի նկատմամբ¹:

Անիի թագավորության անկումից հետո (1045 թ.) Շիրակ նահանգը նրա մայրաքաղաքի հետ միասին ընկնում է բյուզանդական տիրապետության տակ ու կառավարվում կատեպանների միջոցով: Այդ շրջանին են վերաբերում քաղաքային պարիսպների ամրացումն ու ընդարձակումը, և ջրուղու կառուցումը: Այդ առթիվ մնացած Ահարոն կատեպանի արձանագրության մեջ ասված է՝ «... գալով գեղեցիկ կառուցված Անի ամրոցը, բարձրացրի նրա պատերը և սեփական միջոցներով բերի առատ ջուր սույն ամրություն, հուրախություն և ի հագեցում ծարավների»²:

Բյուզանդացիների կողմից Անին գրավվելուց քսան տարի անց, 1064 թ., նրա պարիսպների տակ երևացին սելջուկյան կորքերը Ալի-Արսլանի գլխավորությամբ: Այս անգամ ևս քաղաքի ամրությունները, նրա պաշտպանների հնուտ օգտագործմամբ, սկսեցին լուրջ խոչընդոտ հանդիսացան թշնամու համար: Քաղաքի 27 օր³ տևող պաշարումը, որ մանրամասն նկարագրել են Արիստակես Լաստիվերտցին⁴ ու Մատթեոս Ուռհայեցին⁵ (որոնց տեղեկությունները հիմնականում համընկնում են Ահմեդ բեն Մուհամմեդ էլ Ջաֆարիի⁶ «Նիզգարիստան»-ում բերված նկարագրությանը) կարող էր վերջանալ ապարդյուն, եթե նրա ներսում գտնվող բյուզանդական կորքերը չլքեին քաղաքային պարիսպների պաշտպանությունը ու չբարձրանային միջնաբերդ:

Աստիճաբար չի լինի մի քանի մեջբերումներ անել վերոհիշյալ մատենագրերից: Ըստ Արիստակես Լաստիվերտցու նկարագրության, թշնամին «մըտ-

¹ Մաթևոս Ուռհայեցի պատմիչը տալիս է Անիի պաշարման ու նրա ճերմակապաշտպանության մանրամասնությունները (տես նրա ժամանակագրությունը, էջ 84—86, 95—97, Վաղարշապատ, 1898):

² Н. Я. Марр, Ани, стр. 140.

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 92:

⁴ Պատմություն Արիստակեսյ վարդապետի Լաստիվերտցոյ, Քիֆլիս, 1912, էջ 164—167:

⁵ Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 146—150:

⁶ Ռուսերեն թարգմանությունը Խանիկովի (տես Ս. Я. Марр, Ани, էջ 50—51):

եալ յաշխարհս մեր՝ ահ և երկիրդ հաաուցաներ հեռաւորաց և մերձաւորաց. կոխեր, տապալեր, վաշխարհս բազումս, մինչև էհաս 'ի քաղաք՝ որ վմեղս իւր 'ի կատարումն լրիս իւրով ունէր: Կանգնեաց վիտրանն իւր ընդդէմ քաղաքին Անույ, և տարածեաց զբանակս ընդ յայնութիւն երկրին. ջանայր, հնարեր՝ զի զդուռն երկաթի և զնիզս պղնձի 'ի բաց խլեսցէ, որ կայր ընդդէմ թագաւորութեանն իւրոյ. և անյոյս լեալ յաղագս ամրութեանն՝ թէպէտ և վմարտն սաստկացուցաներ, կամեր չուել: Եւ զայն ոչ գիտակցեալ թէ էարկ տեր 'ի մեջ պահապանաց և իշխանացն երկաթառակութիւն և անմիաբանութիւն, ամբոխումն և բաժանումն. և անդէն թողեալ զգործ պատերազմին՝ 'ի փախուստ դարձան, և խուճապեալք յերկիրդէն՝ ոչ ոք յազգայինսն կամ 'ի կարևոր բարեկամսն հայեցաւ, այլ իւրաքանչիւր ոք ահիւ ըմբռնեալ: Եւ տեսեալ զայս սպառապէն զօրացն՝ որ արտաքոյ մարտնչէին հանդէպ ինքեանց 'ի վերայ պարսպին ճանապարհ առնէին, և իբրև վկուտակումն ալեաց ծովու 'ի ծոց քաղաքին հեղուին, և զպարսկական սուրն 'ի գործ արկեալ ոչ ունէք խնայէին: Իսկ բազմութիւն արանց և կանանց յապարանս թագաւորացն դիմեալ՝ իբրև թէ կարիցեն ապրիլ, և այլքն ճողոպրեալ յամուրն, որ ներքի բերդ կոչի»¹:

Նկարագրելով քաղաքային ազգաբնակչության անողոք ջարդի վարիուրելի պատկերը, այնուհետև Լաստիվերոցին շարունակում է. «զի լցաւ քաղաքն լի ծայրիւ և ծայրիւ, և ճանապարհ էր մարմին սպանելոցն. զի 'ի բազմութենէ կոտորելոցն և յանթուելի դիականցն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքան, ներկանէր արեամբ. և զազանք վայրի և ընտանի՝ եղեն գերեզման դիակացն. վասն զի ոչ գոյր որ թաղէր և հարկաւոր հողովն ծածկեր զխողխողեալսն: Այլ և 'ի ճարպոյ անիրաւութեան 'ի նմա գործելոցն տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկահարմար ապարանքն (ընդգծումը մերն է,— Վ. Հ.), և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ 'ի նմա՝ խափանեցաւ»²:

Պատմիչն ավարտում է Անիի գրավման նկարագրությունը իր ժամանակի սոցիալական անարդարությունների վայրագին մերկացմամբ. «Այս է բաժին անիրաւ քաղաքաց,— ասում է նա,— որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և 'ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ սողքատս և տնանկա՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղտեղութեան ոչ խորշին, այլ միայն արբեալ լինին 'ի ցանկութեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի»³:

Մատթեոս Ուռնայեցու հաղորդմամբ՝ «Վասն զի էր Անի բազմամբոխ, քաղաքն լցեալ բիւր բիւրուց արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ հիացումն

¹ Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերոցոյ, էջ 165—166:

² Նույն տեղ, էջ 166—167:

³ Նույն տեղ, էջ 167:

արկանէր տեսողացն, զոր կարծեալ զօրացն բալմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց իցէ. և յայնմ աւուր հալար և մեկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի: Եւ էր քաղաքն շուրջանակի քարակտուր, և էր գետն Ախուրեան շրջապատ, բայց միայն ի մի կողմն տեղի ինչ կայր դոյր՝ որպէս թէ նետընկէց մի, զոր բաբնով փլուցին այլապգիքն. և բալում աւուրս պատերազմեալ ոչ կարացին մտանել ի քաղաքն, յայնժամ թուլացան ի պատերազմէն: Իսկ անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս կացուցեալ էր թագաւորն պահապանս տանն Հայոց, Բագրատ հայրն Սմբատայ և Գրիգոր Քակուրանին որդին Վրացի ազգաւ, սկսան սոքօք ամրանալ ի վերին բերդն և ի ներքին»¹: Այնուհետև ինչպես շարունակում է Ուռհայեցին, երբ թշնամին նկատում է քաղաքում տիրող խուճապն ու հուսալքությունը և պարիսպների անպաշտպան վիճակը, վերսկսում է գրոհը ու խուժում քաղաքը²:

Ն. Մառը, իրավացիորեն նկատում է, որ մուսուլման պատմիչ Ահմեդ բեն Մուհամմեդ էլ Ջաֆարին ավելի ռեալ կերպով է նկարագրում քաղաքի գրավումը: «Նրա (այսինքն՝ քաղաքի, — Վ. Հ.) սահմաններն ու շրջապատը, — պատմում է նա, — վննելուց հետո, հայտնի դարձավ, որ ձիավորը չի կարող ընդհուպ մտնել նրա պատերին, հետիոտի ուժից վեր է բարձրանալ նրա աշտարակների վրա: Եվ այնժամ արքայորդուն (Մելիք շահին, Ալի Արսլանի որդուն. — Վ. Հ.) տիրեց խոր մտածմունք, որովհետև թողնել քաղաքը և հրաժարվել այս տեղերի բնակչության նկատմամբ ունեցած ձգտումներից, նշանակում է լիովին վնաս կրել»³: Այնուհետև պատմիչը հաղորդում է, որ կառուցեցին բազմաթիվ նավակներ և խանդակով անցկացրին հետիոտն ու ձիավոր զորքեր, սակայն ոչ մի հաջողություն չունեցան: Ձիավորներից շատերը զոհվեցին, նույնիսկ ինքը, արքայորդին քիչ մնաց քաղաքից ձգած արկանի մեջն ընկներ: Հաջողությունը եկավ ինքն իրեն. տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ, որի հետևանքով քաղաքի արևելյան մասում եղան մեծ փլուզումներ, պարսպապատերը փոլ եկան և լըցնելով խանդակները, հնարավորություն տվին պաշարողներին հեշտությամբ անցնել այն ու մտնել ամրություն⁴:

Սելջուկների կողմից Անիի պաշարման ու գրավման վերը բերած նկարագրությունը ավելորդ անգամ վկայում է քաղաքի անառիկությունն ու Բագրատունիների ստեղծած պաշտպանական կառուցվածքների հպորությունը և ապահովությունը, որոնք կարող էին դիմագրավել թշնամու գրոհին, եթե նրան օգնության չգար տարերքը՝ երկրաշարժը:

1 Մառթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 147—148:*

2 *Նույն տեղը, էջ 148:*

3 *Քարգմանված է ըստ Ն. Մառի գրքում բերված ռուսերեն տեքստի (տե՛ս АНН, էջ 50—51):*

4 *Նույն տեղը, էջ 51:*

1072 թ. Գանձակի եմիր Տադյունը գնեց Անին Ալի Արսլանից ու նվիրեց իր թոռանը՝ Մանուչեյին: Այդ գործարքով Անիում մինչև XII դարի վերջը, որոշ ընդմիջումներով, հաստատվեց սելջուկների վասալ, քրդական Շեդադյանների տոհմի տիրապետությունը: Քաղաքի նոր տերերի շինարարական գործունեությունից հայտնի են միայն առանձին փաստեր: Այսպես, օրինակ, Մանուչեն Ախուրյանի ձորաբերանի մոտ դեռևս X դարի վերջում շինված մաքսատան շենքին կից կառուցել տվեց մինարեթ, վերածելով շենքը մզկիթի: Ինչպես հավաստիացնում է Վարդան պատմիչը, Մանուչեն ավերված քաղաքը զգալիորեն վերականգնեց «և շինեցաւ քաղաքն Անի ոչինչ պակաս քան պառաջինն»¹:

Շեդադյանների մի այլ ներկայացուցիչ՝ Կայ սուլթանը 1198—1199 թթ. կառուցեց մի ուրիշ՝ Աբու-լ-Մամրանի մզկիթը մինարեթով: Շեդադյաններին է վերագրվում նաև քաղաքային պարսպապատերի որոշ հատվածների վերականգնումը: Շատ բան քաղաքի վերաշինման ուղղությամբ արվեց նաև Անիի բնակչության կողմից:

XII դարի ընթացքում Անին 2—3 անգամ անցավ վրաց թագավորների տիրապետության տակ: 1123 թ. նա գրավվեց Դավիթ Շինարարի կողմից, սակայն նրա որդի Դեմետրե Ա-ն ստիպված եղավ նորից քաղաքը վերադարձնել նախկին տերերին: 1161 թ. Գեորգի Գ-ն մտավ Անի, բայց շուտով ստիպված եղավ այն թողնել: Միայն 1174 թ. նրան հաջողվեց նորից նվաճել Անին ու հանձնել վրաց Օրբելիանի իշխանների ղեկավարման, բայց սրանք ևս կրկին կորցրին այն: 1194 թ. Չաքարյանները գրավեցին Անին, իսկ երկու տարի անց, նաև ամբողջ Շիրակի նահանգը, որը մայրաքաղաքի հետ միասին կազմեց Ամիրսպասալար Չաքարեի տիրույթի մասը: XIII դարի սկզբից, 30—35 համեմատաբար խաղաղ տարիների ընթացքում. (հայ-վրացական քաղաքական և ռավական համագործակցության պայմաններում) Անին որպես երկրի ծաղկուն կուլտուրական և առևտրու-արհեստային կենտրոն վերածնվում է: «Ենց այս ժամանակ է, որ քաղաքի նոր տերերը՝ Չաքարյանները, ֆեոդալական ավագանու և հարուստ քաղաքացիների՝ մեծատունների (ինչպիսին էր, օրինակ, Տիգրան Հոնենցը), լայն մասնակցությամբ ծավալում են իր նշանակությամբ բացառիկ բեղմնավոր շինարարական գործունեություն: Վերաշինվում և ամրացվում են քաղաքի պարիսպները, կառուցվում են նոր շատ եկեղեցիներ, պալատներ, խանապարներ, խանութներ, արհեստանոցներ, ձիթհանքեր և այլն: Անին դառնում է Անդրկովկասում և մերձավոր Արևելքում հանրահայտ քաղաք՝ բազմաշատ ու բազմազգի բնակչությամբ: Պատմական աղբյուրներում Անին կոչվում է «մեծ քաղաք», «քաղաքամայր»:

¹ Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 138:

XIII դարի Անիի օրինակով կարելի է համոզվել, որ միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական կուլտուրան կանգնում է նոր, ավելի բարձր մի աստիճանի վրա, բնութագրելով այն որպես ֆեոդալական քաղաքի մի լիարժեք կոմպլեքս: Սակայն նրա այդ փայլուն ծաղկումը նորից ընդհատվում է Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի համար նոր ու անբարենպաստ պատմական անցքերով: 1236 թ. մոնղոլական հրոսակները Չարմաղանի գլխավորությամբ պաշարեցին քաղաքը: Շրջապատելով այն բոլոր կողմերից, նրանք կանգնեցրին բազմաթիվ փիլիկուաններ (պարիսպների գրավման հարմարանք) և դաժան մարտերից հետո գրավեցին Անին: Կիրակոս Գանձակեցին տալիս է այդ մարտերի և մոնղոլների կողմից քաղաքային բնակչության նկատմամբ կատարված դաժանությունների նկարագրությունը: Իր պատմության ԻԷ գլխում՝ «Վասն քաղաքի Անույ, թե որպես մատնեաց տեր ի ձեռս նորա» խորագրի տակ Գանձակեցին հայտնում է. «Քաղաքս այս Անի լցեալ էր բալուրթեամբ մարդկան և անասնոց և պարսպեալ ամրագոյն պարսպօք: Եւ եկեղեցի բազում կայր ի նմա, մինչ ի կարգ խօսից երդման այսպես երդնուին՝ «Անույ հապար և մեկ եկեղեցին»: Եւ յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իրօք. վասն որոյ յղփութիւնն համբարտաւանութիւն ած վնոսա, և ամբարտաւանութիւնն՝ ի կորուստ, որպէս սովոր է առնել ի սկզբանց և այսր: Առաքեաց Չարմաղանն դեսպանս առ նոսա գալ նմա ի հնազանդութիւն: Եւ որք գլխաւորքն էին ի քաղաքին ոչ իշխեցին պատասխանի առնել պատգամի առանց հարցանելոյ վիշխանն Շահնշահ, քանզի ընդ իշխանութեան նորա էր քաղաքն: Իսկ ամբոխն քաղաքին և ռամիկքն սպանին զպատգամաւորսն: Եւ զայն տեսեալ զօրքն այլազգեաց, ի բարկութիւն բրդեցան և պաշարեալ զքաղաքն յամենայն կողմանց՝ կանգնեցին փիլիկուանս բազումս արուեստագիտութեամբ և, մարտուցեալ ընդ քաղաքին զօրեղապես՝ առին զնա»¹: Այնուհետև Գանձակեցին բերում է մոնղոլների կատարած դաժանությունների մանրամասն նկարագրությունը:

Մոնղոլների տիրապետության օրոք Անին մնաց Չաքարյանների տոհմի ներկայացուցիչների ձեռքը, որոնք վասալական կախման մեջ էին մոնղոլներից: Որոշ ժամանակ քաղաքային կյանքը շարունակում է վարգանալ քիչ թե շատ նորմալ: XIII դարի ընթացքում ունևոր դասի առանձին ներկայացուցիչներ՝ ինչպես Սահմադինը և ուրիշ մեծատուններ, շարունակեցին Անիում և նրա շրջակայքում շինարարական որոշ գործունեություն:

Սակայն XIV դարի երկրորդ կեսից սկսվում է քաղաքի անկման պրոցեսը, որը աղետային բնույթի է հասնում նույն դարի վերջում: 1319 թ. տեղի ունեցավ հզոր երկրաշարժ, որը մեծ վնասներ պատճառեց քաղաքի շենքերին, նույն

¹ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 258*,

թվում և Մայր տաճարին, որի գմբեթը փլվեց: Թեև ավանդական հայկական պատմագրությունը այս երկրաշարժի հետ է կապում Անիի լքումը նրա բնակիչների կողմից, սակայն, ինչպես ցույց են տվել պեղումները, քաղաքը դեռևս շարունակում էր իր խզճուկ գոյությունը XIV և XV դարերում¹:

Հաջորդ դարերում Անին գտնվում էր Օսմանյան տիրապետության տակ և նրա ավերակները ժամանակավոր իջևանատեղ էին ծառայում քոչվորական տարբեր ցեղերի համար:

1887 թ. Կարսի նահանգի հետ միասին Անին անցավ ցարական Ռուսաստանին: 30 տարի անց, 1917 թ. Կովկասյան ճակատում թուրքերի հարձակման հետևանքով Անիից շտապ կարգով դուրս բերվեցին հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված նյութերը:

Շարունակելով հարձակումը Անդրկովկասում, թուրքական իմպերիալիստները օգտվելով ստեղծված իրադրությունից կարողացան անջատել Ղարսի նահանգն ու նրա հետ միասին Անի քաղաքները: Այժմ Անին մատչելի է միայն տեսողության համար՝ սահմանային Ախուրյան գետի ձախ ափից:

բ. ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան Հայաստանի ոչ մի քաղաք թերևս այնքան հանրահայտ չէ գիտական գրականության մեջ, ինչպես Անին: Բացի նրա մասին եղած մատենագրական առատ աղբյուրներից, որոնք վերաբերվում են քաղաքի լիարյուն կյանքի շրջանին, գրականության մեջ կարելի է հանդիպել ուղեգրությունների, նկարագրությունների և ուսումնասիրությունների՝ որ գրել են անմարդաբնակ դարձած քաղաքի ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա այցելուները: Այն հետաքրքրությունը, որ առաջացրին գիտական աշխարհում նշված նյութերը, և Բագրատունիների երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի ավերակները, խթանեցին Անիի հնագիտական սխտեմատիկ ու լուրջ ուսումնասիրությունների սկիզբը: Այդ աշխատանքը, որ ձեռնարկվեց 1892 թվականից, անվանի գիտնական Ն. Մառի ղեկավարությամբ, ընդհատվեց միայն 1917 թ., երբ ստեղծված իրադրության հետևանքով հարկադրված էին թողնել Անին:

Լինչի², Ն. Մառի³ և Լեոյի⁴ մոտ բերված են մի շարք գիտնականների առևաններ, որոնք տեղում ուսումնասիրել են Անին կամ ըստ մատենագրական

¹ Н. Я. Марр, Ани, стр. 84.

² X. Ф. Б. Лич, Армения т. I, стр. 471—472, т. II, *գրականութ. ցանկ*:

³ Н. Я. Марр, Ани, стр. 2—26, *Ժանոթագրություններ 230—235 էջերում*:

⁴ Լեո, *Անի*, էջ 19—65:

աղբյուրների վբաղվել նրա պատմությամբ: Անիի վերաբերյալ գրականությամբ հետաքրքրվողները կարող են ծանոթանալ նշված գրքերում բերված բիբլիոգրաֆիային: Այս գրքին կցված գրականության ցանկում առանձնացված են այն աղբյուրները, որոնք առավել օգտակար են քաղաքատեղի և նրա հուշարձանների ուսումնասիրության համար:

XVII դարում Անիի ավերակների առաջին այցելուները (Պուլեր, Տավերնյե) քաղաքատեղի մասին խոսում են հարևանցիորեն: XIX դարի առաջին կեսի ընթացքում Անի այցելած ճանապարհորդներ, գիտնականներ ու այլ անձինք (օտարերկրյա՝ Քեր-Պորթը, Համիտոնը, Բորրեն, Աբբոտը, Տեքսիեն և ուրիշները, հայրենական՝ Աբիխը, Խ. Աբովյանը, Մուրավյովը, Ն. Սարգսյանը, Բրոսսեն, Խանիկովը, Գրիմմը և ուրիշներ). Անիին վերաբերվեցին մեծագույն ուշադրությամբ, ավելի հանգամանորեն տեղեկություններ շարադրեցին ավերակների ու գտնված արձանագրությունների մասին, վբաղվեցին ճարտարապետական հուշարձանների չափագրությամբ ու նկարումով, հետագայում դրանք հրատարակելով իրենց աշխատություններում: Նրանցից միայն Տեքսիեն և Գրիմմն են հատկապես վբաղվել ճարտարապետական հուշարձաններով, ուսումնասիրել ու չափագրել, կատարել առաջին, ճիշտ է, ոչ կատարյալ փորձը, հրապարակել Անիի մի քանի ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ հավաքած նյութերը:

Քաղաքատեղի առաջին հատակագիծը կազմել է Աբիխը 1844 թվականին: XIX դարի սկզբին հրատարակված աշխատություններում առաջին անգամ Մինաս Բժշկյանի գրքումն է շարադրված քաղաքի պատմությունը¹:

Ընդհանուր առմամբ դրականորեն արտահայտվելով Անի այցելած ավելի քան քսան ճանապարհորդների մասին, որոնք ուղեգրություններ են հրատարակել Անիի վերաբերյալ, միաժամանակ Ն. Մառը նրանց մոտ նշում է իդեալականացման որոշ առկայություն և նկարագրությունների մակերեսայնություն, որը նրա կարծիքով, արդյունք է «... այն արտաքին տպավորության, որ նրանք ստացել են համր ավերակներն այցելելուց»²:

XIX դարի երկրորդ կեսը բնութագրվում է Ռուսաստանին միացած Անդրկովկասի ժողովուրդների պատմության և նյութական կուլտուրայի ավելի խոր և բավակողմանի ուսումնասիրությամբ: Այդ ժամանակաշրջանը առավել արդյունավետ հանդիսացավ նաև Անիի ուսումնասիրության տեսակետից, թեև նրա գտնվելը (մինչև 1877 թ.) թուրքական տիրապետության սահմաններում որոշ չափով խոչընդոտ էր հանդիսանում դրա համար:

¹ Մ. Բժշկեան, *Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1806*:

² Н. Я. Марр, *Ани*, стр. 4.

Հատկապես Անիին նվիրված առաջինը եղել է ռուս ակադեմիկոս Բրոսսեի գիրքը¹, ուր բերված են Մ. Բժշկյանից փոխ առած քաղաքի պատմությունը, Կեստներից՝ նկարները, Աբիխից՝ քաղաքի հատակագիծը: Ն. Մառի կարծիքով, Բրոսսեի աշխատությունը որոշ ժամանակ հանդիսացավ հիմնական ձեռնարկ, երբեմն նույնիսկ սկզբնաղբյուր Անիի մասին, թեև քաղաքի պատմության շարադրման մեջ հեղինակն ըստ էության Մ. Բժշկյանից ոչ մի քայլ առաջ չի գնացել:

Այդ ժամանակաշրջանի հայրենական գիտությունը հարստացավ նաև Դ. Գրիմմի² աշխատությամբ՝ նվիրված հատկապես Վրաստանի ու Հայաստանի ճարտարապետությանը, ուր վերարտադրված են նաև Անիի առանձին հուշարձանների չափագրությունները:

Հայ ընթերցողների շրջանում Անիի ժողովրդականացման գործին մեծապես նպաստեց Ղ. Ալիշանի «Շիրակ» աշխատությունը: Նրա հեղինակն, ինչպես և Բրոսսեն, Անին չի տեսել, սակայն պատմական, վիմագրական, նկարագրական ու այլ տվյալների լայն օգտագործման միջոցով տվել է Շիրակի նահանգի պատմա-աշխարհագրական ընդարձակ ակնարկը: Նահանգի միջնադարյան մայրաքաղաքին նվիրված է գրքի մոտ մեկ երրորդը: Նրանում բերված են մեծ քանակությամբ իլյուստրացիաներ (նկարներ, գծագրեր, լուսանկարներ), փոխ առնված այլ հեղինակների երկերից (Տեքսե, Բրոսսե և այլն), բերված է քաղաքի հատակագիծը, որի վրա ցույց են տրված պահպանված հուշարձանները:

Ալիշանի «Շիրակ» աշխատությունը տողորված է կրթոտ հայրենասիրությամբ, որը, ինչպես ճիշտ կերպով նշում է Ն. Մառը, հատուկ է Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայերի համար: Սակայն, ըստ Մառի, ռոմանտիկական-ապգային պատկերացումների որոշակի շեշտի հետ մեկտեղ, այնուամենայնիվ, գիրքը «տվեց էական օգուտ նաև գիտության համար՝ հայ հասարակության մեջ առաջացնելով հետաքրքրություն հանդեպ Անիի հնությունները»³:

Այն հանրահայտությունը, որ ձեռք բերեց Անին թվարկված աշխատությունների շնորհիվ, է՛լ ավելի մեծ հետաքրքրություն առաջացրեց նրա ավերակների հանդեպ և հասունացրեց նրանց պեղումների անհրաժեշտության հարցը: Ռուսաստանի կայսերական հնագիտական հանձնաժողովի միջոցներով ու հայ հասարակայնության նյութական օժանդակությամբ Անիում 1892 թ. սկսվում են պեղումները, որը գլխավորում էր այն ժամանակյա տակավին երիտասարդ ու սկսնակ գիտնական Ն. Մառը:

¹ Brosset, Les ruines d'Ani, I—II, СПб. 1860—1861.

² Д. И. Гримм, Памятники Христианской архитектуры Грузия и Армении, СПб, 1866.

³ Н. Я. Марр, Ани, стр. 21.

Հնագիտական այդ առաջին, ինչպես և հաջորդ 1893 թ. արշավները ընդգրկեցին քաղաքի կենտրոնական մասի ոչ մեծ հողակտոր և պակվեցին հաջողությամբ: Իր հնագիտական հետազոտությունները Ն. Մառը սկսեց քաղաքի պատմության ուսումնասիրության հետ միասին: «Անի՝ հին Հայաստանի մայրաքաղաքը» հոդվածում¹ Ն. Մառը շարադրել է քաղաքի համառոտ պատմությունը, կապված նրանում կատարված շինարարական ու վերջինական աշխատանքների հետ:

1893 թ. ընդհատված պեղումները վերսկսվեցին միայն տասը տարի հետո՝ 1903 թ. և արդեն հաջորդ տարվանից կրեցին սիստեմատիկ բնույթ, տևելով մինչև 1915—1916 թթ. այդ պեղումները աշխույժ հետաքրքրություն առաջացրին ազգաբնակչության մեջ և գիտական շրջանների ուշադրությունը բևեռեցին իրենց վրա: Անին դարձավ մշտական այցելությունների վայր շրջակա գյուղերի ու քաղաքների բնակչության, ինչպես և գիտական աշխարհի ներկայացուցիչների համար:

Իր բազմամյա հնագիտական հետազոտությունների արդյունքները Ն. Մառը նախասովետական շրջանում պարբերաբար հրատարակել է հաշվետվությունների ձևով, որոնք հետագայում՝ սովետական շրջանում ամփոփվեցին նրա «Անի» մենագրության մեջ²: Այդ արժեքավոր աշխատության մեջ հեղինակը պատմական լայն ֆոնի վրա հանգամանորեն շարադրել է հնագիտական արշավանքների արդյունքները: Խոսելով Անիում կատարված պեղումների նշանակության մասին Մառը գրել է. «Անի քաղաքը շրջակա Շիրակ նահանգի հետ, հնության իրենց հուշարձանների ու վիմական բազմաթիվ արձանագրությունների շնորհիվ իրավունք ունեն գրավելու և արդեն սկսում են գրավել բացառիկ տեղ իրենց ընդհանուր նշանակությամբ մի շարք գիտական դիսցիպլինների համար, ոչ միայն արևելյան բանասիրության, անկախ հայագիտությունից, այլև արևմուտյան, այսինքն՝ բյուզանդագիտության, սլավոնագիտության և այլն»³:

Շնորհիվ Ն. Մառի և իր հնագիտական արշավախմբի մասնակիցների (որոնց թվումն էին Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը, Ն. Բունիաթյանը, Ա. Վրույրը, Ն. Տոկարսկին, Ս. Պոլտորացկին, Գ. Չուբինովը և ուրիշներ) մեծ ջանքերի և չնայած նախասովետական շրջանի դժվարին պայմանների, Անին ենթարկվեց այնպիսի բազմակողմանի հնագիտական հետազոտության, ինչպիսին այն ժամանակ չէր ենթարկվել Հայաստանի ու Անդրկովկասի միջնադարյան քաղաքներից ոչ մեկը: Միայն ցավել կարելի է, որ հետագա անցքերը, որոնց հետևանքով

¹ *Տե՛ս «Братская помощь армянам» ժողովածուն, էջ 197—222:*

² *Լույս է տեսել կրկու հրատարակությամբ՝ Լենինգրադյան (1934) և Երևանյան (1939) Մեջբերումները կատարված են վերջինից:*

³ *Н. Я. Марр, Ани, стр. 86.*

պեղումները շարունակելու հնարավորությունները վերացան, թույլ չտվին ավարտել Անիի լիակատար ուսումնասիրությունը:

Հնագիտական արշավանքների ընթացքում, հետաքրքրական պեղումների հետ մեկտեղ, կատարվեց քաղաքատեղիի տեղագրական հանույթը, որի հետևվանքով ստացվեց Անիի ամենաճիշտ (նախորդների հետ համեմատած) հատակագիծը, չափագրվեցին, նկարվեցին և նույնիսկ վերանորոգվեցին ճարտարապետական հուշարձանները, հրատարակվեցին հանրամատչելի գրքեր¹ և հատուկ ուսումնասիրություններ², իսկ պարբերական մամուլում լույս ընծայվեցին մեծ թվով հոդվածներ ու թղթակցություններ³ Անիի և նրա հուշարձանների մասին: Տեղում կապակերպվեց հնադարան, որտեղ կենտրոնացվեցին հնագիտական պեղումների հետևանքով ձեռք բերված իրերը, նրանց գիտական հետազա մշակման, վերականգնման ու ցուցադրման համար:

Անիի այցելուների թվում եղավ նաև անգլիացի Լինչը (1894 թ.), որը Ն. Մառի կարծիքով օտարերկրյա ճանապարհորդներից առավել աչքի ընկնողն էր իր դիտողականությամբ: Նրա մեծածավալ աշխատության⁴ մեջ շատ էջեր են նվիրված Անիին, վերարտադրված են բազմաթիվ լուսանկարներ, քաղաքի հատակագիծը, որը Աբիսի կատարած հանույթի իր կողմից տեղում ճշտված տարբերակն է:

Անիի պեղումների ժամանակաշրջանին է վերաբերվում նաև անվանի պատմաբան և վիպասան Լեոյի գիրքը, որը հրատարակության էր նախապատրաստված դեռևս 1914 թ., սակայն լույս տեսավ միայն սովետական շրջանում⁵. Թեև այն գրված է ուղեգրության ձևով, սակայն բովանդակում է շատ արժեքավոր տեղեկություններ ու դիտողություններ Անիի ու նրա շրջակայքի վերաբերյալ:

Անիի բարձրարվեստ ճարտարապետական հուշարձանները լուսաբանող նախասովետական շրջանի առավել կարևոր աշխատությունների ցուցակը լրանում է Վիեննայի համալսարանի պրոֆեսոր, ականավոր գիտնական Հ. Սորժիգովսկու գրքով: Գալով Անի 1913 թվականին, պեղումների ամենառոտն շրջա-

¹ Հ. Օրբիլի, *Անեոյ աւերակները (հայերեն և ռուսերեն)*, *Նույն հեղինակի «Путеводитель по городу Ани»* և այլն:

² Ք. Քորամանյան. *«Անի քաղաք թե ամրոց» (Ազգագրական հանդէս» XXII և XXIII)*, *Նույն հեղինակի՝ «Հայաստանի արքունական ու իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը», «Գեղարվեստ» (1917, № 6)*, *Н. Г. Буннатов, Дворцовая церковь в Ани (չափագրությունների ալբոմ, Ն. Մառի առաջաբանով)*, և այլն:

³ Հայկական և ռուսական թերթերում և ամսագրերում այդ տարիներին լույս են տեսել Ք. Քորամանյանի ու Անիի հնագիտական արշավախմբի այլ մասնակիցների բազմաթիվ թղթակցությունները պեղումների արդյունքների մասին:

⁴ Х. Б. Личч, Армения, I, стр. 430—450.

⁵ Լեո, *Անի, Երևան, 1946:*

նում. նա Թ. Թորամանյանի նյութերից ծանոթանում է Անիի ճարտարապետական հուշարձաններին և իր գրքում մի սովոր բաժին հատկացնում նրանց¹:

Անիի հնագիտական հետազոտությունների արդյունքները, որոնք չափազանց հարուստ են ըստ նյութերի և բազմակողմանի ըստ բովանդակության ու ընդգրկման, սնեցին ոչ միայն նախասովետական շրջանի հայրենական ու օտարազգի գիտնականների աշխատությունները, նրանք սովետական շրջանում ևս օգնեցին ժամանակակից հայագետներին մարքսիստական մեթոդոլոգիայի հիման վրա մշակելու Հայաստանի պատմության խնդիրները, լուսաբանելու քաղաքների սոցիալ-տնտեսական կյանքի, սոցիալական փոխհարաբերությունների, առևտրի, արհեստների, ճարտարապետության ու շինարարական արվեստի վարգացման հարցերը²:

Այդ տվյալները, ինչպես և սովետական ժամանակաշրջանում հրատարակված մեր պատմաբանների աշխատությունները, հնարավորություն են տալիս ավելի լայն չափով, քան այդ կարելի է անել միջնադարյան Հայաստանի այլ քաղաքների նկատմամբ, կազմել Անիի քաղաքաշինական բնութագիրը:

¹ I. Strzowski, Die Baukunst der Armenier und Europa, B, I, Wien, 1918.

² *Սովետական շրջանում լույս տեսան մի շարք աշխատություններ, որոնցում քննության են առնված Անիի պեղումների նյութերը: Դրանց թվին են պատկանում՝* Н. М. Ткарский, Архитектура древней Армении, Ереван, 1946 (*երկրորդ վերամշակված հրատարակությունը՝ 1961*), В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, А. Л. Якобсон, Очерки истории зодчества Армении V—XIII в.в. Ереван, 1950. К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951 г. *Բ. Ն. Առաքելյան, Հայաստանի քաղաքները և արհեստները IX—XIII դդ., Երևան, 1954 և այլն:*

**ՔԱՂԱՔԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ**

Անի քաղաքն իր հարմար տեղադրությամբ ու պաշտպանական նպատակներով բնական պայմանների լավ մտածված օգտագործմամբ, կարելի է ասել, միջնադարյան Հայաստանի քաղաքներից լավագույնն է:

Նա փռված է Ախուրյան գետի աջափնյա մի եռանկյունաձև հրվանդանի վրա (բարձրությունը ծովի մակերևույթից 1500 մ), որը երկու կողմից եզերված է կիրճերով: Նրանցից մեկի հատակով հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ոլորապատույտ հոսում է Ախուրյանը, իսկ արևմտյան կողմից գտնվող Ծաղկոցաձորով՝ հյուսիսից-հարավ հոսում է Անիի կամ Ալաշայի գետակը, որը (նրան միացող Բագնայրի վտակի հետ մեկտեղ) հրվանդանի հարավ-արևմտյան վերջավորության մոտ միախառնվում է Ախուրյան գետին: Հյուսիսային կողմից քաղաքի տարածությունը բնականորեն անջատվում է երկու ոչ խոր ձորակներով՝ Գայլիձորով (հյուսիս-արևելյան կողմից) և Իգաձորով (հյուսիս-արևմտյան կողմից): Սրանց միջև գտնվող հարթավայրը (550—600 մ լայնությամբ) Սըմբատյան պարիսպներով սահմանապատված է դեպի հյուսիս շարունակվող սարահարթից (սկ 1):

Նշված բնական սահմանների միջև առնված հողատարածությունը, 51,5 հկտ. ընդհանուր մակերեսով, մեծ մասով հարթավայր է և միայն նրա հարավային կողմում բարձրանում է մի բլուր, որն իշխում է կից ու հեռավոր հարթավայրերի վրա և շնորհիվ իր ժայռոտ լանջերի ունի անառիկ դիրք: Ահա այդ բլուրն էլ ընտրված է եղել Կամսարականների կողմից ամրոցի, իսկ Բագրատունիների՝ հուսալիորեն պաշտպանված պալատի կառուցման համար:

Եռանկյունաձև հրվանդանի հարավ-արևմտյան վերջավորության վրա, միջնաբերդից ներքև, կա ևս մի բարձունք, որը Աղջկա բերդ կամ Ղըզղալա էր կոչ-